ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ **EDU ARMENIA**

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ի՞նչպես ձևավորել սովորողների մեջ արժեքային համակարգը դասերի ընթացքում

ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Գավառ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ժենյա Միրիբյան

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ռուզաննա Ավագյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոց

ԳԱՎԱՌ **2023թ.**

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Ի՞նչպես ձևավորել սովորողների մեջ արժեքային համակարգը դասերի ընթացքում 4

3.Դասապրոցեսի անցկացման մեթոդները.....12

4.Դասի պլան.....17

5.Եզրակացություններ, առաջարկություններ.....19

6.Գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անձի մոտ հենց դպրոցական և հատկապես վաղ տարրական դպրոցի շրջանում է զարգանում ակտիվ ճանաչողական գործունեությունը և այս ընթացքում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքներ և կարողություններ: Տարրական դասարաններում հիմնականում անցնում են այնպիսի թեմաներ, որտեղ շեշտը դրված է հայրենասիրության, ընտանիքի և ազգային արժեքների վրա: Արժեքային համակարգը ենթադրում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր սովորող պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողություն ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք: Ունենա ազգային ինքնագիտակցություն, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա արդարության, պատասխանատվության և լավատեսության զգացում: Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընմբռնվում է լայն շառավիղով: Այն մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Ուսուցման գործընթացի կարևոր բաղադրիչը սովորողների կրթական, դաստիրակչական, արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներն են: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ մենք՝ ուսուցիչներս, որոշակի դաստիրակչական խնդիրներ ենք լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Առանձնացվում են ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի դրսևորվում են: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը:

Ի՞ՆՉՊԵՍ ՁԵԱՎՈՐԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կրթության մասին խոսելիս՝ հաճախ ենք օգտագործում «արժեքներ» և «արժեքային համակարգ» հասկացությունները: Պետության և խելամիտ հասարակության համար անսահման կարևոր է գալիք

սերնդի մոտ ճիշտ ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը: Ի վերջո ի՞նչ է «արժեք» ասածը, ի՞նչ արժեքներ և ինչպե՞ս են դրանք ձևավորվում մատաղ սերնդի կյանքում:

Արժեքները երևույթներ են մեր կյանքում, որոնց դիմաց մենք, կարելի է ասել, գին ենք վճարել: Արդյունքում դասեր ենք քաղել, դարեր շարունակ փորձ կուտակել, և հիշում ու պահպանում ենք այդ կարևոր դասերը մեր կյանքում: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Առանց արժեքների կյանքը, գիտակցությունը դատարկ է: Ճիշտ է՝ հեշտ կլիներ առանց արժեքների ապրելը, չգիտակցել և անզգացմունք ապրել, չզգալ կորուստների և հաղթահարումների գինը, բայց այդպես ապրելը երբեք չի երջանկացնում՝ հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից: Դրանք անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Էթիկական նորմերը տարբեր են ոչ միայն հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջաններում, նույնիսկ երկրի տարբեր տարածաշրջաններում:

Էթիկական նորմերը տարբերվում են քաղաքներում և գյուղերում: Նորմերը թելադրում են մեզ որոշակի վարքագիծ, և որքան դրանք ավելի խիստ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է ձևավորվում, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթներն ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Այսօր համացանցի զարգացման և հատկապես սոցիալական ցանցերի հասանելիության պարագայում առավել բարդ է դառնում զարգացած արժեհամակարգի պահպանումը, անհնար է չնկատել, որ հենց այս ցանցերն են դառնում այսօր մատաղ սերնդի մեջ այդ տարատեսակ «ազատություններն» ընդունելի դարձնողը և անկասկած արժեհամակարգի խալխլողը:

Երեխաների մեջ ժամանակակից հեռուստատեսության, տեխնոլոգաների, համացանցի ազդեցությամբ ձևավորվում է որոշակիորեն նորածև դարձած չածազանց ազատ վարքագիծ. երեխաները ազատ ժամանակի մեծ մասն անցկացնում են ժամանակակից սարքավորումների առաջ, համացանցի «անմեղ» թվացող մուլտֆիլմերի առաջ, որոնք դանդաղորեն և աննկատ ազդեցություն են գործում երեխաների արժեհամակարգի վրա:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը, սկսում «ընդունելի» դառնալ: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում,

հանցագործությունների թիվն աճում է, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ կոտորել իրար:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա ճիշտ արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի, որտեղ հաստատուն են էթիկական նորմեր, որտեղ մատաղ սերունդը սովորում է համապատասխանել դրանց: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Սա չափազանց բարդ և պատասխանատու աշխատանք է: Որոշ դեպքերում դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ:

Երեխան դպրոցական հասակից պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց սովորողի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք ոչ միայն աշխարհի ամենալավ կրթական համակարգը, այլև կայուն, խելամիտ սերունդ, որին կկարողանանք վստահել մեր հասարակության և հայրենիքի ապագան:

Այս պարագայում ինչպե՞ս պետք է դպրոցը և մանկավարժը ազդի արժեհամակարգի ձևավորման վրա: Դպրոցը և մանկավարժը դերը օրօրի ավելի է կարևորվում մատաղ սերնդի դաստիարակության, հասարակության վաղվա օրվա մեջ նրա ինքնադրսևորման, ինքնահաստատման, իր երկրի ապագայի կարևորությունը գիտակցելու գործում:

Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի և ապագայի միջև և ապահովում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը և փոփոխումը: Ինպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է լայն շառավիղով: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի ընկալումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, մշակութային արժեքների, գիտական նվաճումների հանդեպ հպարտության, հարգանքի զգացում: Անձի մոտ հենց դպրոցական և հատկապես վաղ տարրական դպրոցի շրջանում է զարգանում ակտիվ ճանաչողական գործունեությունը և այս ընթացքում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքներ և

կարողություններ: Աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, ժողովրդագրական, մշակութային, ընտանեկան, հասարակական, կրթական, սոցիալական և այլն, իսկ բանմեկերորդ դարում նաև համամարդկային կամ այլ կերպ ասած գլոբալիզացիայի ազդեցությունը: Ուստի ժամանակակից մանկավարժության համար խնդիր է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային կարևոր արժեքները:

Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով վերջիններիս վարքի ձևերը, ապրելակերպը, կենցաղը, հագուստը, կյանքի ոճը, խոսելաձևը և այլն: Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ սովորողի մեջ ընտանիքի և սոցիալական միջավայրի ազդեցությամբ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերությունների, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ անձի արժեքային կողմնորոշումները, նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ կազմաբնախոսական և տարիքային առանձնահատկությունների: Սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում արժեհամակարգային դաստիարակությունը սկսում է ակնհայտորեն դրսևորվել՝ խոսքում, արտաքին տեսքում, սովորություններում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակության մեջ ամենակարևորը մանկավարժների կողմից «սովորողների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում.

1-ին փուլ – Դրոշմի: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում

իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները:

2-րդ փուլ – Կրկնօրինակման: Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:

3- րդ փուլ – Սոցիալականացման: Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը: Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են՝ ծնողների, ուսուցիչների, մեծահասակների, ընկերների հետ և այլն, կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները: Բնականաբար այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև սովորողի վրա ներգործություն ունեցող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամներ, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Սովորողը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդորում՝ բացասական մոդելները ավելի արագ են ձևավորվում և կարող են անդառնալի բացասական ազդեցություն ունենալ սովորողի անձի արժեքային դաստիարակության վրա: Ուստի արժեհամակարգի դաստիարակությունը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն ու, եթե անհրաժեշտ է նաև միջամտություն: Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնական և դաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով սովորողների մեջ սերմանել բաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները

ներգործում են սովորողների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է սովորողների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ սովորողները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում սովորողն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է սովորողների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում արժեքային համակարգը Մայրենիի դասերին տարրական դասարաններում: Տարրական դասարաններում հիմնականում անցնում են այնպիսի թեմաներ, որտեղ շեշտը դրված է հայրենասիրության, ընտանիքի և ազգային արժեքների վրա: Տարրական դպրոցում ուսումնառության ընթացքում երեխաները ձեռք են բերում ոչ միայն տարրական գրագիտություն, այլև առաջին գիտելիքներն ու հանաչողական հմտությունները, որոնք ձևավորում են սովորողների մեջ ազգային արժեհամակարգի տարրերը: Հենց այս պատճառով է, որ կրթության գենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Արժեքային համակարգը ենթադրում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր սովորող պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողություն ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք: Ունենա ազգային ինքնագիտակցություն, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա արդարության, պատասխանատվության և լավատեսության զգացում: Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը: Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները և այլն ... Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական, արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ մենք՝ ուսուցիչներս, որոշակի դաստիրակչական խնդիրներ ենք լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Առանձնացվում են ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասդեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ սովորողները սովորում են

ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ, նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից.

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,
2. նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,
3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից
4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից,
5. սովորողներին ազգային և հոգևոր մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու՝ դասերի ուղղվածությունից,
6. դասերի ժամանակ ազգային պատմության համամասնության պահպանումից,
7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից, որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք:

Սովորողների մոտ տեղեկատվական աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից, ստեղծագործական, զգացմունքային մթնոլորտի ձևավորումից, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Տարրական դասարանում ցանկացած առարկա, սովորողին ծանոթացնում է մտածողության աշխարհին, ի սկզբանե նպատակ ունի սովորողների մեջ զարգացնել արժեհամակարգ և դիրքորոշում: Ամբողջական գործընթացը տեղի է ունենում միջնորդի օգնությամբ, որի դերում հանդես է գալիս ուսուցիչը: Մենք օգնում ենք սովորողներին անձնական որակների ձևավորման և զարգացման գործում: Եվ այստեղ հատկապես կարևոր են ոչ միայն զգացմունքային, այլև ռացիոնալ մտորումները անկախ հաջողության հասնելու հանգամանքից:

Դասարանում կիրառելով արժեքային մոտեցման մեթոդաբանությունը՝ ուսուցիչը ձգտում է սովորողներին ծանոթացնել աշխարհի առանձնահատկություններին բոլոր դասընթացների ընթացքում յուրովի: Տվյալ ուսումնական առարկայի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու ամբողջ գաղտնիքը, մեր կարծիքով,

այդ առարկան ներկայացնելու արվեստի մեջ է: Սովորողներին ներկայացնելով՝ առարկայի յուրահատկությունները և առավելությունները ուսուցիչները սովորողներին տանում են գաղափարների մի նոր աշխարհ, որտեղ առարկան բացվում է իր գրավիչ, հետաքրքիր, հաճելի և կարևոր կողմերով, որն էլ կարող է ծառայել որպես լավագույն օրինակ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների աճին: Արդյունքում զգալիորեն կընդլայնվի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների շրջանակը՝ բերելով առարկաների նկատմամբ հետաքրքրության աճի և, որն էլ, ըստ էության, սովորելու ցանկություն ձևավորելու ուղիներից մեկն է: Տարրական դասընթացներում օգտագործվող մեթոդաբանություններն ունեն իրենց առանձնահատկությունները: Այստեղ, ֆենոմենվում է ինչպես տարբեր գիտությունների, առարկաների գիտելիքներ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրի արժեհամակարգային դրսևորումները և դրանց նշանակությունը անհատի և մարդկության համար: Իրոք, ծանոթացնելով սովորողներին առարկաների ընթացքում ամրապնդվող արժեքներին, մենք ի վերջո ձգտում ենք ապահովել, որ այդ արժեքները դառնան սովորողի ձեռքբերումը՝ օգնելով նրան իրագործվել որպես ստեղծագործ անձնավորություն:

Մենք՝ մանկավարժներս պետք է կարևորենք ակտիվ ուսուցման մեթոդները, որոնք հանդիսանում են ճկուն դասավանդման մեթոդներ, քանի որ դրանցից շատերը կարող են օգտագործվել տարբեր տարիքային խմբերում և տարբեր պայմաններում: Ակտիվ մեթոդները սովորողների և ուսուցչի փոխգործակցության ձևեր են, որոնց ընթացքում ուսուցիչն ու սովորողները միմյանց հետ փոխազդում են դասերի ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ դասում հիմնական գործող անձը ուսուցիչն է, ապա այստեղ ուսուցիչն ու սովորողները հավասար իրավունքներով են: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորողին բացահայտում են նոր ձևով, որի ժամանակ նա դադարում է պասիվ լինել և դառնում է կրթական գործընթացի ակտիվ մասնակից:

Մեթոդ **1**

Նման մեթոդներից մեկ կիրառում ենք **«ԿԼԱՍՏԵՐԸ»**, որը կարող է օգտագործվել դասի տարբեր փուլերում: Այս մեթոդի իմաստը այս կամ այն խնդրի վերաբերյալ ունեցած գիտելիքները համակարգելու և նորերը լրացնելու փորձն է: Սովորողը գրատախտակի կենտրոնում գրում է առանցքային հասկացություն, և կենտրոնից ճառագայթների տեսքով դուրս են գալիս սլաքներ, որոնք այդ բառը կապում են ընդհանրություն ունեցող այլ բառերի(բանաձևերի) հետ, որոնցից շարունակաբար տարածվում են ճառագայթները, իրենց հերթին ամբողջական պատկերացում ստեղծելով: Այս մեթոդը ընձեռում է հնարավորություն զարգացնելու երեխաների հիշողությունը, բարձրացնում է մասնակցությունը և հետաքրքրությունը առարկայի վերաբերյալ:

Մեթոդ **2**

Գիտելիքների ամփոփման փուլում, որը տեղի է ունենում դասի ավարտին, օգտագործվում է "Սինքվեյն" մեթոդը: Սինքվեյնի կիրառումը սովորողից պահանջում է կարճ արտահայտություններով ամփոփել ուսումնական նյութը: Այն ազատ ստեղծագործական ձև է, բայց որոշակի կանոններով, որոնք հետևյալն են՝

Առաջին տողում գրվում է մեկ բառ, այսինքն սինքվեյնի թեման:

Երկրորդ տողում սովորողը պետք է գրի երկու ածականներ, որոնք բացահայտում են տվյալ թեման:

Երրորդ տողում լրացվում են երեք բայեր, որոնք նկարագրում են թեմային վերաբերող գործողությունները:

Չորրորդ տողում ամփոփվում է մի ամբողջ մտքով: Կարող է լինել թևավոր արտահայտություն, մեջբերում կամ սովորողի կողմից կազմված նախադասություն թեմայի համատեքստում:

Վերջին գիծը հոմանիշ բառն է, այս թեմայի նկատմամբ իր վերաբերմունքը, զգացողությունը կամ համեմատությունը:

Իմ՝ որպես տարրական դասարանների ուսուցչի, գործունեության նպատակը ներդաշնակ, համակողմանի զարգացած և սոցիալապես հասուն անհատականության ձևավորումն է, սովորողներին ծանոթացնելով տարրական դասարանների առարկաների վերաբերյալ գիտելիքներին և արժեքներին: Ամենակարևոր առաջադրանքը՝ սովորողներին հետաքրքրել ուսումնասիրվող նյութի բովանդակությամբ, ինչը հնարավոր է միայն յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունների, զաղափարախոսությունների, գիտատեխնիկական առաջընթացի և մարդու առօրյա գործնական գործունեության հետ սերտ կապի շնորհիվ:

Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ այսօրվա երեխաները հսկայական քանակությամբ տեղեկատվություն են ստանում տարբեր ուղիներով: Հեռուստալիքները, ռադիոհաղորդումները, ֆիլմերը, ամսագրերն ու գրքերը, համացանցը՝ դպրոցականներին հետաքրքիր, մատչելի և երբեմն գվարճալի կերպով պատմում են ժամանակակից ձեռքբերումների և չլուծված խնդիրների մասին: Սա հանգեցնում է նրան, որ սովորողները շատ բան գիտեն կամ գոնե լսել են, և հաճախ դժվար է նրանց որևէ բանով զարմացնել: Հաշվի առնելով դա՝ ուսուցիչը պետք է չսահմանափակվի համընդհանուր արտահայտություններով, այլ կարողանա ցույց տալ լուծվող խնդիրների բարդությունը և ընդգծել, որ դասի կոնկրետ թեմայի ուսումնասիրությունը կօգնի սովորողներին հասկանալ և բացատրել, թե ինչ են լսել ավելի վաղ: Մենք պատկերացում ենք տալիս առարկաների առօրյա կիրառելիության մասին՝ դասարանում առանձնացնելով տարաբնույթ օրինակներ, կազմակերպելով ինտելեկտուալ խաղեր: Դասերին մենք անդրադառնում ենք գլոբալ էկոլոգիայի հիմնական խնդիրներին՝ օգտագործելով բնության ամենամեծ բնապահպանական ճգնաժամերի օրինակները: Այս ամենը հնարավորություն է տալիս

սովորողներին բացատրել ողջ մարդկության համար աղետալի հետևանքները, որոնք առաջացել են բնության օրենքները խախտելու հետևանքով: Անդրադարձը նմանատիպ խնդիրներին ձևավորում է այնպիսի արժեքներ, որոնք հետագայում թույլ կտան ճիշտ օգտագործել մոլորակի ռեսուրսները, առաջացած համամարդկային խնդիրների վերաբերյալ տալ ճշգրիտ բացատրություններ և ռացիոնալ լուծումներ: Օգտագործելով կոնկրետ օրինակներ՝ ես սովորողներին ցույց եմ տալիս, թե յուրաքանչյուր առարկան ինչ կարող է տալ նրանց՝ (գիտելիքներ, մեթոդներ, մոտեցումներ)՝ բնապահպանական խնդիրների լուծմանը պատասխանատու և գիտակից մասնակցության դեպքում: Անդրադարձ ենք կատարում տնային առաջադրանքներին: Հետաքրքրաշարժ տնային հանձնարարությունները խթանում են երեխաների հետազոտական ունակությունների կատարելագործմանը: Չէ որ, եթե ինչ որ չափով դասը լիարժեք չի ընկալվել սովորողի կողմից՝ վերջինս տնային աշխատանքը կատարելիս լարում է իր ուժերը, փնտրում է թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն, հարցնում է իր դասընկերներին: Այս գործողությունները հանգեցնում են խնդրի լուծմանը, որը իր հերթին մեծացնում է սովորողների մտահորիզոնը:

Թիմային խաղեր

Տնային աշխատանքներից բացի, դասապրոցեսի ընթացքում անց են կացվում թիմային խաղեր: Ուշագրավ է այն փաստը, որ երեխաները աշխուժացել են, մեծ հետաքրքրություն և ներգրավվածություն ցուցաբերել ողջ պրոցեսի ժամանակ: Փորձերը ցույց են տվել, որ սովորողները խրթին թվացող նյութերը, բավական հեշտությամբ են ընկալել և հետագայում ներկայացրել, հենց, խաղերի միջոցով: Բերենք խաղերի օրինակներ, շարադրանքը ավելի հասկանալի դարձնելու համար:

Խաղ 1

Խաղը կոչված է մեզ բոլորիս շատ հայտնի XO անվանմամբ և անց է կացվում դասի վերջին 15 րոպեների ընթացքում: Դասարանը բաժանվում է 2 թիմի: Նախապես իմ կողմից պատրաստված են լինում հարցեր, որոնք կարող են լինել շատ բազմազան: Յուրաքանչյուր բջիջի վրա դրված է առաջադրանքով քարտ (քարտը շրջված է գլխիվայր): Յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է տեղադրել X կամ o, պետք է կատարի քարտով նախատեսված առաջադրանքը: Եթե պատասխանը ճիշտ է, խաղացողը ընտրված բջիջում դնում է X կամ O: Հաղթող խաղացողը գնահատվում է 9, պարտվողը՝ 8:

Խաղ 2

Խաղի ընթացքում դասարանը բաժանվում է երկու թիմի: Թիմի կազմում են՝ դարպասապահ, պաշտպաններ, կիսապաշտպաններ, հարձակվողներ: Թիմի ցանկացած անդամ կարող է ավագ լինել: Յուրաքանչյուր թիմ դասակարգվում կամ նստում է ֆուտբոլի կանոններին համապատասխան: Մրցավարը ընտրվում է կամովին, ով հետևում է պատասխանների ճշտությանը, հաշվում կամ չի հաշվում

գոլերը, գրանցում է յուրաքանչյուր խաղացողի մասնակցության բաժինը խաղին՝ խաղի վերջում լավագույն խաղացողներին պարգևատրելու համար: Յուրաքանչյուր թիմ պետք է նախապես հարցեր պատրաստի մրցակցի համար: Հարցեր է տալիս թիմի ավագը: Հարցը ուղղում է մրցակից թիմի հարձակվողներին: Եթե հարձակման գիծը չի կարողանում պատասխանել հարցին, ապա գնդակը փոխանցվում է կիսապաշտպանություն, ապա պաշտպանություն և վերջում դարպասապահին: Եթե պատասխանը չի հնչել, ապա հարց տվող թիմը արձանագրում է գոլ: Կարևոր է հիշել խաղի կանոնները. Թիմի ներսում չի կարելի խորհրդակցել տարբերվող դիրքերի խաղացողների միջև: Կանոնների խախտման համար նշանակվում է տուգանային հարված, այսինքն. կա՛մ անմիջապես պաշտպանություն, կա՛մ 11 մետրանոց հարված դարպասապահին: Հաղթում է այն թիմը, որը ավելի շատ գոլեր է խփում: Հավելեմ, որ այս մոտեցումը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխաների էմոցիոնալ հիշողությունը, օժանդակել նրանց կապել իրարից տարբեր մի քանի փաստեր ամբողջական պատկերը ստանալու համար:

Դասի պլան

Ամիս,ամսաթիվ՝ ____.____._____

Առարկա՝ «Տեխնոլոգիա»

Դասարան՝ 4-րդ

Դասի թեմա՝ «Գեղարվեստական արհեստները Հայաստանում»

Դասի նպատակը՝ Իմանալ փայտի գեղարվեստական մշակման, մետաղագործական արհեստների (դարբնություն, բրոնզագործություն, պղնձագործություն, ոսկերչություն, արծաթագործություն) և այլն մասին: Իմանալ՝ ինչ է քարագործությանը, կավագործությանը, ապակեգործությանը: Ծանոթացնել կաշվեգործության և ժանյակագործության հետ:

Վերջնարդյունք՝ Կկարողանա հասկանալ կարդացածը և վերարտադրել: Գեղագիտական և մշակութային ճաշակի ձևավորում: Կիմանա մետաղագործության, բրոնզագործության, ոսկերչության,

արծաթագործության, կավագործության, կաշվեգործության, ապակեգործության, ժանյակագործության մասին:

Անհրաժեշտ նյութեր՝ նախշազարդերով փայտյա իրեր, կենցաղային իրեր որոնք պատրաստված են արծաթից, պղնձից բրոնզից: Շինությունների (տներ, բերդեր, եկեղեցիներ, կամուրջներ) նկարներ, որոնք կերտվել են քարից: Ապակուց պատրաստված զարդեր, ուլունքներ, կենցաղային իրեր: Կաշվե իրերի նմուշներ, ասեղնագործ գործվածքների նմուշներ: Մեթոդներ՝ մտագրոհ, խմբային աշխատանք, քառաբաժան:

Տևողությունը՝ (45րոպե)

Դասի ընթացքը՝ (2րոպե)

Կատարել հաշվառում, ստուգել աշակերտների պատրաստվածությունը:

Խթանման փուլ՝ (5րոպե)

Ամփոփել նախորդ նյութը՝ հարցուպատասխանի միջոցով:

- Ի՞նչ է զոդումը:
- Զոդման ինչ տեսակներ գիտեք:

Իմաստի ընկալման փուլ՝ (20րոպե)

«Մտագրոհ» մեթոդի միջոցով պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը մշակութային արժեքների մասին:

- Ի՞նչ մշակութային արժեքներ գիտեք:
- Հայաստանում հանդիպե՞լ եք որևէ մշակութային արժեքի, որը ձեզ դուր է եկել:
- Հանդիպե՞լ եք առօրյա օգտագործվող իրերի, որոնք պատրաստված են եղել կաշվից:

- Սիրու՞մ եք ասեղնագործ աշխատանքներ:
- Ինքներդ երբևիցե ասեղնագործե՞լ եք:

Աշակերտներին ծանոթացնել գեղարվեստական արհեստների հետ: Աշակերտներին բաժանել խմբերի և ամեն խմբի հանձնարարել գրել տեղեկություն գեղարվեստական արհեստների մասին: Այնուհետև աշակերտները միասին քննարկում են իրենց խմբի աշխատանքը:

Կշռադատման փուլ՝ (10րոպե)

Սովորողների գիտելիքները ամբողջացնելու և ամրապնդելու համար նրանց հետ անցկացնել խաղ-վիկտորինա LearningApps ծրագրով:

Քառաբաժանիմիջոցով պարզել սովորողների զգացողությունները՝. Ինչ գիտեն, ինչը նոր իմացան, ինչն էր, որ մնաց անհասկանալի:

Ամփոփում՝ (5բոպե)

Հարցուպատասխանի միջոցով ամփոփել նոր նյութը:

Կատարել գնահատում՝ (2բոպե)

Գնահատել ամենալավ ներկայացած խմբին:

Եզրակացություն

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է սովորողների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ անհրաժեշտ է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անբակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Դպրոցում սովորողը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում սովորողների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ սովորողների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ արժեքային համակարգի ձևավորման սկզբում մեծ է ծնողների դերը: Երեխաները ընկալում են համամարդկային արժեքները, որոնք փոխանցվում են նրանց, որպես բացարձակ իրողություն: Միջին տարիքում երեխաները ավելի շատ փնտրտուքների մեջ են: Նրանց վրա մեծ է շրջապատի ազդեցությունը: Կրկնօրինակում են իրենց հասակակիցներին, հայտնի մարդկանց, ծնողներին, և այս համատեքստում է, որ կարծես թե արժեքների ծաղկաքաղ է տեղի ունենում նրանց մոտ: Ավագ դասարաններում սովորողների արժեքային համակարգը կախված է շրջապատից, նրանց հուզական ապրումներից, զգացմունքներից, որն էլ թելադրում է որոշակի արժեհամակարգ:

Առաջարկություններ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:
- Դասաժամերին հավելյալ ֆիլմարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու: Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:
- Արժեհամակարգ լավագույնս կարող է ձևավորվել նաև.
    - Ինտելեկտուալ խաղ-մրցույթների միջոցով:
    - Սովորողների ինքնակրթությունը խրախուսելու միջոցով:
    - Ականավոր գործիչների, ազգային հերոսների հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով:
    - Դասաժամերին ՏՀՏ գործիքների ավելի շատ կիրառության միջոցով:

➢ Կամավոր աշխատանքների մեջ սովորողներին ընդգրկելով:

- Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003
2. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002
3. Ա.Վ. Մուդրիկ, Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում, Երևան, 1986
4. Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում
5. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4. , Երևան, 1991
6. M. Rokeach, The Nature of Human Values. New York. The Free Press, 1973
7. https://hy.scienceforming.com/10585127-what-are-human-values
8. https://www.goodreads.com/author/quotes/5810891.Mahatma_Gandhi